

Ամառային պրակտիկայի հատուկ ծրագիր

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը սույն թվականի **օգոստոսի 15-26-ն** ընկած ժամանակահատվածում կազմակերպում է հատուկ մշակված ծրագրով ուսումնական պրակտիկա ուսանողների համար:

Ծրագրում ներգրավված են լինելու ՀՀ բուհերի **իրավաբանական ֆակուլտետների** լավագույն ուսանողները: Նախապես մշակված ծրագրի շրջանակներում ուսանողները հնարավորություն կունենան՝

- ծանոթանալ ֆինանսական համակարգի կառուցվածքին, գործունեությանը և իրավական կարգավորումներին
- ստանալ տեսական և գործնական գիտելիքներ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի գործունեության վերաբերյալ
- ծանոթանալ բողոքների ընդունման և պահանջների քննության գործընթացին
- սովորել վեճերի լուծման այլընտրանքային եղանակների, այդ թվում՝ հաշտարարության և արբիտրաժի մասին

Ծրագրի ավարտին ուսանողներին կտրվեն մասնակցության վկայականներ:

Հետաքրքրված ուսանողներն իրենց տվյալները՝ Անուն Ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և միջին որակավորման գնահատական, կարող են ուղարկել hmakaryan@fsm.am էլեկտրոնային փոստի հասցեին մինչև սույն թվականի **օգոստոսի 10-ը**:

Հարցերի համար կարող եք դիմել Հասմիկ Մակարյանին, հեռ. 060-7011111, ներքին՝ 401: